Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-866-02.04.2010-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) լրացնել նոր 47.7-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝

«ՀՈԴՎԱԾ 47.7 ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԳՈՎԱԶԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

Հատուկ նշանակության սննդամթերքի գովազդը առանց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համաձայնեցման՝

առաջացնում է տուգանքի նշանակում գովազդատուի նկատմամբ յուրաքանչյուր սննդատեսակի համար սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Ալկոհոլային խմիչքների և ծխախոտի գովազդը «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ մասերի պահանջների խախտմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում գովազդատուի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից մինչև երեքհարյուրհիսունապատիկի չափով:

Ալկոհոլային խմիչքների և ծխախոտի գովազդը «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ, 5-ից 5.3-րդ մասերի պահանջների խախտմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում գովազդատուի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից մինչև երեքհարյուրհիսունապատիկի չափով:

Սույն հոդվածով նախատեսված արարքները կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:
ՀՈԴՎԱԾ 2. Օրենսգրքի 244.14-րդ հոդվածում «45-47.4» թվերից հետո լրացնել «և 47.7» բառերը:
ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	1. Նախագծով նախատեսվող լրացումներն անհրաժեշտ է սահմանել առանձին հոդվածների տեսքով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով նախատեսվող համապատասխան լրացումները վերաբերվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի տարբեր հոդվածների: 2. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջները՝ նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում «47[7]» թիվն անհրաժեշտ է փոխարինել «47.7» թվով: Նույն դիտողությունը վերաբերվում է նաև նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերին: 3. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով լացվող 47.7-րդ հոդվածի 2-	1.Առաջարկն ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: 2.Առաջարկն ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:

	րդ մասում «1. 3. 4.» թվերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին, 3-րդ և 4-րդ» թվերով: Նույնը վերաբերվում է նաև հիշյալ կետով լացվող 47.7-րդ հոդվածի 3-րդ մասին:	3.Առաջարկն ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: